

Մշակութային և Հասարակական
Երկշաբաթաթերթ

Յոյս

1800 թուման
Հայաստանում՝ 320 դրամ

**ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԲՈՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ
ԼՐԱՏԻՂԱՄԻՋՈՑՆԵՐԸ**

Յոյս

Երկշաբաթաթերթ

6-րդ տարի, թիվ 139, 26 Յունար 2013
1800 թուման
Հայաստանում՝ 320 դրամ



ԱՅՍ ԶԱՄԱՐՈՒՄ

- 2 Անգին ձեռագրերի ցուցահանդես Թաւրիզի ազգային առաջնորդարանում
- 4 Էմմա Եւ Լիզա Սարգսեանների յիշատակին
Լեւոն Ահարոնեան
- 6 Զայաստան՝ Նախագահական ընտրութիւնների թեկնածուները
Տաթև Յարութիւնեան
- 7 Զայ-վրացական յարաբերութիւնների հեռանկար
Նաիրա Զայրումեան
- 13 Լեւոն Միլասեանի «Պատմութիւն Փերիայի հայերի» աշխատութիւնը
Ներսէ Ծ. Վ. Բախտիկեան
- 16 Պատմաձք՝ Մեռնել Թափուրութեան ցաւից (2)
Շանթ Բաղդամեան
- 18 Զեծանիւղ լուսանկարներում
- 20 Փոխիր քաղաք, փոխիր քեզ
- 22 Խոհանոց՝ Լեարդի ստեյք
- 24 Մարզանք
Արման Տէր Ստեփանեան

ԶԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԲՈՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԼՐԱՏԻՎՄԻՋՈՑՆԵՐԸ

- 10 Զուրգիրիի ֆիւմերը՝ զւարճալիքի միջոց Ռոբերթ Սաֆարեան
- 11 Բռնի ագրեսիան Եւ շահադիտական դրդապատճառներով հանցագործութիւնը
Անահիտ Ասատրեան

Պարսկերէն բաժին

- | | | |
|---------------------------------------------|-----------------------------------------------------|--------------------------------------------------------------------|
| 2 Այս համարի հայերէն էջերում | աշխատանքների սկիզբ | Դաւուդ Լաթիֆի |
| 4 Վստահելով Ռուսաստանին Նաիրա Զայրումեան | 6 Արբի Յովհաննիսեանի ֆիլմի մասին Ռոբերթ Սաֆարեան | 8 Զայ նկարիչներ՝ Լեւոն Թուրունջեան |
| 5 Իրան-Զայաստան երկաթագծի շինարարութեան | 8 Առաջին հայկական մանկապարտեզը Մազանդարանում | 11 Մոզաֆարեդդին շահի ուղեւորութիւնը Զայաստան Զրանդ Ղուկասեան |

Յոյս

Հասարակական-մշակութային երկշաբաթաթերթ

Արտոնատեր՝

Լեւոն Ահարոնեան

Խմբագիր՝

Ռոբերթ Սաֆարեան

Խմբագրական կազմ՝

Լիա Խաչիկեան,
Գարուն Սարգսեան,
Արմինէ Մելիք-Իսրայէլեան

Գեղարւեստական ձեւաւորում՝

Լիա Խաչիկեան

Գովազդ

Անի Ղելիչեան

Կայք

Քաջիկ Սաֆարեան

Մարզական

Արման Տէր
Ստեփանեան

Բաժանորդագրութիւն

Քաթրին Եաղուրի

Զասցէ՝

Թեհրան, Զամ պողոտայ,
համար 18, բնակարան 1
88300472 88825521

hoosy@inbox.com

www.hoosy.com



ԱՆԳԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԵՒ ՅԱԶԻԱԳԻՒՏ ՀՆԱՏԻՊԵՐԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ ԹԱՒՐԻՉԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՈՒՄ

Թաւրիզ, Ազգային Առաջնորդարան – Մեծի Տանն Կիլիկիոյ Սուրբ Աթոռի Գահակալ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսը, 2012 թւին Հայրապետական հռչակագրով կոչել էր «Հայ Գիրքի Տարի», որովհետեւ այս տարի լրանում էր Հայ Գրատպութեան 500-ամեակը, ինչպէս նաեւ Եունեսքոյի կողմից քաղաքամայր Երեւանը հռչակել էր «Գրքի Մայրաքաղաք»:

Եռեակ այս առիթները լուսարձակի տակ բերելու նպատակով, 2012 թւին իր արեւմտքը չտեսած, Ատրպատականի հայոց թեմը հրաշալիօրէն եզրափակեց «Հայ Գիրքի Տարի»-ն, թեմում պահպանած անգին ձեռագրերի եւ հազարաւոր հնատիպերի ցուցահանդէս կազմակերպելով Ազգային Առաջնորդարանում, Երկուշաբթի 24 Ղեկտեմբեր 2012-ի, երեկոյեան ժամը 8-ին:

Ազգային Առաջնորդարանի «Համագասպ Ոսկանեան» սրահում, հովանաւորութեամբ եւ ձեռամբ Թեմի Առաջնորդ Գերպ. Տ. Գրիգոր Ծ. Վրդ. Չիֆթեանի, պաշտօնական բացումը կատարեց ցուցահանդէսի, ներկայութեամբ Պատգամաւորական ժողովի եւ Թեմական խորհրդի անդամների, կրթա-

կան մշակների, մշակութասէր հասարակութեան, դպրոցական աշակերտների եւ ժողովրդի բազմութեան: Ցուցահանդէսը կազմակերպել էր Թեմական խորհրդի կողմից, օժանդակութեամբ «Ռոստոմ-Գասպար» գրադարանի վարչութեան եւ Թաւրիզի Հայ համալսարանականների միութեան:

Ցուցադրել էին Ատրպատականի հայոց թեմի դարաւոր հարուստ ժառանգութեան մաս կազմող հազարաւոր հնատիպերի օրինակներ, ինչպէս նաեւ թանկագին ձեռագրեր, որոնք այս առիթով ընդհանուր մաքրման եւ դասաւորման ենթարկւեցին, վերահսկողութեամբ Թեմական խորհրդի: Սրահի մշակութահամ միջավայրի կենտրոնական զարդն էր կազմում, Թաւրիզի առաջին ոտով բանող մամուլը, որը դարձեալ հիմնական մաքրման էր ենթարկել:

Բացման խօսքը արտասանեց Ռիթա Նազարբեգեանը: Նա ողջունելով Վեհափառ Հայրապետի կողմից հռչակած «Հայ Գիրքի Տարի»-ն, անդրադարձաւ Ատրպատականի հայոց թեմի թանկարժէք այս աւանդին, որը ներշնչման աղբիւր էր հանդիսացել անցեալ սերունդներին: Նա Թեմի անու-



նով շնորհակալութիւն յայտնեց բոլոր նրանց, որոնք օժանդակեցին ցուցահանդէսի կազմակերպչական աշխատանքներին: Հանդիսավարուհին ապա հրաւիրեց գեղարուեստական յայտագրի մասնակիցներին, մեներգերով ու ասմունքներով փառաբանելու հայ լեզուն, հայ դպրութիւնն ու դրա անմահ հեղինակ Ս. Մեսրոպ Մաշտոցին:

Մեներգերով հանդէս եկան Թեմի տաղանդաւոր զաւակներից՝ Ռիմա Աղաջանեանը, Ռեբեկա Սարգսեանը եւ Նարինէ Սայադեանը, երգեհոնի ընկերակցութեամբ դաշնակահար Կարէն Սարգսեանի: Իսկ ասմունքով հայ գիրն ու դպրութիւնը պանծացրին՝ յայտնի ասմունքող Նայիրի Դիլանեանն ու պարմանուհի Անուշիկ Գրիգորեանը: Ապա, Թեմակալ Առաջնորդը փոխանցեց իր պատգամը ներկայ մշակութասէր հասարակութեան, որոնց խիտ շարքերում ներկայ էին Պատգամաւորական ժողովի եւ Թեմական խորհրդի անդամներ, ուսանողներ, ինչպէս նաեւ հայ գիրքը սիրող անձեր:

Հայր Սուրբը իր խօսքում նախ անդրադարձաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետի հռչակագրին, որու տարբեր բաժինները ներկայացնում էին հայ տպագրութեան 500-ամեայ ճանապարհը, սկսելով 1512 թից, երբ Յակոբ Մեղապարտի ձեռամբ հրատարկեց առաջին հայերէն գիրքը՝ «Ուրբաթագիրք»-ը: Ապա, Հայր Սուրբը յուզումով դուրս բերեց Մաղարդավանքի այն ձեռագիր անգին Շարակնոցը, որը 1914 թիւն, թրքական արշաւանքների օրերին, Ս. Ստեփանոս վանքի վանականները թաղել էին հողի տակ, փրկելու համար վտանգից, եւ միայն 1967 թիւն յայտնաբերել էր այն

եւ բերել Թաւրիզ, պահպանելու համար Ազգային Առաջնորդարանի ձեռագրատնում:

Վերջապէս, Թեմակալ Առաջնորդը իր բարձր գնահատանքը յայտնեց Թեմական խորհրդին, «Ռոստոմ-Գասպար» գրադարանի վարչութեանը, յատկապէս Վահագն Տէր Պետրոսեանին եւ Հայ համալսարանականների միութեանը, յատկապէս դոկտ. Արա Մելիքեանին: Նա իր յատուկ գնահատանքը յայտնեց Ազգ. Առաջնորդարանի պաշտօնեաներից՝ Էմիլ Գրիգորեանին, Տէր եւ Տիկին Համլետ եւ Ռիթա Նազարբեգեաններին, Վարդան Տէր Մարտիրոսեանին, Քրիստափոր Սկրտիչեանին եւ Շաքէ Ալեքսանեանին, որոնք հոգածու վերաբերմունքով ստանձնել էին գրքերի արձանագրութեան եւ մաքրման դժուարին աշխատանքը, ինչպէս նաեւ գեղարուեստական յայտագրին մասնակցութիւն բերած նւիրեալ անձերին:

Հայ գիրքը սիրելու, հայ գրքով ներշնչելու եւ զօրանալու սքանչելի առիթ հանդիսացաւ տոյն նախաձեռնութիւնը, միաժամանակ ծանօթացնելով Թեմի զաւակներին այն մշակութային հարստութիւնը, որը ժառանգ է թողել նախահայրերի կողմից:

ԷՄՄԱ ԵՒ ԼԻԶԱ ՍԱՐԳՍԵԱՆՆԵՐԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Լեւոն Ահարոնեան

Երկու անբաժան քոյրեր, որոնցից էմման 2009 թվականին իր մահկանացուն կնքեց, իսկ Լիզան 2012 թվի նոյեմբերի 28-ին հեռացաւ կեանքից: Երկուսն էլ ապրեցին աւելի քան 93 տարի:

Նրանց կեանքը շատ հետաքրքիր էր: Ծնողները Արցախի շուշեցիներ էին, որոնք նոր ամուսնացած, գործ փնտրելու նպատակով գնացել էին Թուրքմենստանի մայրաքաղաք Աշխաբադ: Նրանց հայրը՝ պրն. Սմբատն սկսել էր աշխատել բամբակի գործարանում: Այդ տարիներին արդէն սկսել էր Ռուսաստանի յեղափոխութիւնը եւ արագօրէն տարածուում էր հարեւան երկրներում: Նա արդէն ունէր երկու զաւակներ՝ էմման 3 տարեկան, իսկ Լիզան 1 տարեկան էր, երբ որոշում է Աշխաբադից հեռանալ եւ անցնել Պարսկաստան: Նա ընկերներին հետ հիմնում է Իրանում առաջին բամբակագտման գործարանը, որից յետոյ վերադառնում է Աշխաբադ՝ կնոջ եւ երեխաներին տեղափոխելու Իրան՝ Նէշաբուր քաղաք: Դժբախտաբար, ճամբին ինքը աւազակների միջոցով սպանուում է եւ կինը՝ Անահիտը մնում է իր երկու դստեր հետ միայնակ: Նա մի աշխատասէր եւ բարեկիրթ կին էր, եւ իմանալով, որ այն օրերին Իրանում յարմար դպրոցներ եւ համալսարաններ չկան, իր երկու դստերին անձամբ տանում է Ֆրանսիա: Մարսել քաղաքում դնում է մի գիշերօթիկ դպրոց եւ ինքը վերադառնում Նէշաբուր, որպէսզի իրենց բամբակ մաքրելու գործարանը տնօրինի: Տարիներ յետոյ երկու քոյրերն աւարտում են քարտուղարութեան մասնագիտութիւնը եւ վերադառնում Իրան:

Էմման աշխատանքի է անցնում Բրազիլիայի դեսպանատանը եւ հէնց այդտեղ էլ հանգստի է կոչուում: Նա երկար տարիներ աշխատել է տարբեր դեսպանների հետ: Իսկ Լիզան նախ ընդունում է մի լիբանանական ընկերութիւն՝ «Օթօ Թեհրան», որը պատկանում էր Քաթանէին, այնուհետեւ «Նիէր Փարս» ընկերութիւն եւ ապա 22 տարի էլ նա «Սաթի» միջազգային փոխադրական ընկերութեան մէջ աշխատում է որպէս տնօրէնի քարտուղարուհի եւ 76 տարեկանում պաշտօնապէս թոշակի անցնում:

Նրանք երկու քոյրեր էլ ազնուութեան տիպար էին, որեւէ խարդաւանքից կամ անօրինական խնդիրներից հեռու էին ու չափազանց վստահելի տարրեր: Նրանք իրենց տնտեսական հարցերում յաճախ էին ինձ հետ խորհրդակցում: Մի շատ զեղեցիկ առանձնատուն ունէին Վոզարա պողոտայում: Սակայն իրենց տարիքի բերումով այդ տան կառավարումը նրանց համար դժար էր, ուստի

իրենց խորհուրդ տւեցի, որ տունը վաճառեն եւ իմ ապրած համալիրում, իմ բնակարանի վերեւի յարկում երկու ննջարանով մի բնակարան գնեն: Լիզան էլ մի առանձնատուն՝ «Վիլա» ունէր Բաբոլսարի մօտ գտնուող Դարիաքենարում, որ ամառներն իրենց մօր հետ գնում էին այնտեղ հանգստանալու: Երկու տարի մէկ՝ երկուսով գնում էին Եւրոպա իրենց ընկերկերին հանդիպելու: Նրանք բաւական հարստութեան տէր էին, եւ իրենց հարստութիւնը կտակել էին միմեանց, իսկ յետմահու բոլոր ունեցածքները կը յատկացւէր Թեհրանի Ազգային իշխանութեան՝ դպրոցների եւ հայ երեխաների ուսմանը ծառայեցնելու նպատակով: Բնակարանը պատկանում էր էմմային եւ նա իր կտակում գրել էր, որ իր մահից յետոյ այդ բնակարանը պիտի յանձնւի Արարատ հաստատութեան:

Էմմայի մահից յետոյ բարեկամները շատացան, աւելի ճիշտ, նոր կանաչեցին, այնպիսիք, որոնց նախապէս չէի տեսել: Ես լաւատեղեակ էի, որ այդ Սարգսեան քոյրերը ոչ մի հարազատ-բարեկամներ չունէին: Էմմայի մահից յետոյ ես սկսեցի կարգաւորել Լիզայի տնտեսական խնդիրները: Դարիաքենարի բնակարանը վաճառեցի եւ դրամն աւանդ դրեցի Մելլաթ բանկում: Պահ դրած դրամի տոկոսով մի տիկնոջ, որն աշխատում էր Սուրբ Գէորգ եկեղեցում, իր աղջկայ հետ վարձեցի ամբողջօրեայ խնամք տանելու Լիզային: Նրա բոլոր ունեւիքների եւ բժշկութեան ծախսերը եւ էի անում այդ ստացած տոկոսից: Աստիճանաբար իմացայ, որ այդ նորածիլ եւ ինքնակոչ բարեկամների աչքը Լիզայի ապրած բնակարանի վրայ է. մանաւանդ դրանցից մէկը, որի հայրը կրօնափոխ էր դարձել եւ ինքն էլ ամուսնացել էր մի օտարազգի հետ, ապօրինի կերպով Լիզայի բնակարանից հանեց բոլոր ակնեղէնները, տարադրամները եւ ոսկեղէնը, որոնք կարելի է ասել մէկ կիլոյից աւել կը լինէին, վերցրել էր իր մօտ: Վտանգն զգալով անմիջապէս կապեցի Արարատի ժամանակի նախագահ՝ Էդուարդ Բաբախանեանի հետ եւ կարճ միջոցում բնակարանը փոխանցեցի Արարատ կազմակերպութեանը, քանի որ ես Լիզայից ունէի պաշտօնական լիազօրագիր եւ բնակարանն էլ Լիզայի անունով էր: Այնուհետ այն բարեկամը, որ Լիզայի տարադրամը, քարեղէնները եւ ոսկեղէնն իր մօտ էր գտնուում, անյոսացաւ եւ այլեւս չերեւաց, միայն թէ ես ունէի նրա բջջային հեռախօսի համարը, որով իմ պարսիկ ընկերների միջոցով գտայ եւ նրանից ստացանք այդ իրերի մի մասը ցուցակագրելով: Այնուհետեւ Լիզայի համար մի անկիզելի դրամարկղ գնեցի եւ բանալին յանձնեցի իրեն: Մի շաբաթով



ստիպւած պիտի գնայի ԱՄՆ: Վերադառնալուց յետոյ նոտարային գրասենեակից ինձ մի նամակ ստացայ, որով յայտնում էր Լիզան իմ լիազօրագիրը բեկանել է եւ մի պարսիկ իրաւաբան է նշանակել իր ժառանգական գործերի համար: Հարցը դրանում չէր, թէ 92-ամեայ Լիզան, որի մօտ արդէն նկատուում էր ալցեյմեր հիւանդութեան հետքերը, ինչպէս կարողացաւ գնալ եւ մի պարսիկ նոր իրաւաբան գտնել: Այդ նորածիլ բարեկամների շարքումն էլ մի գոյգ ամուսիններ կային, որ ես երբէք նրանց Լիզայի եւ Էմմայի մօտ չէի տեսել: Կնոջը հեռուից ճանաչում էի: Նա ունեցել էր մի ամուսին, որ հէնց այդ կնոջ ծննդից իր տղային վերցնում էր ու փախչում, եւ արդէն 40 տարուց աւելի կինը իր առաջւայ ամուսնուց եւ իր հարազատ տղայից լուր չունէր: Դա ապացուցում է այդ կնոջ էութիւնը: Ուրեմն նրանք իմ բացակայութեան գալիս են Լիզայի մօտ եւ ինձ վատաբանելով, նրան տանում են նոտարի մօտ եւ բեկանում իմ լիազօրագիրը:

Մէկ տարուց աւելի, Լիզան իրականում բանտարկւած վիճակում է եղել. ոչ ոք նրան չէր կարող տեսնել, այդ անագնիւ մայրն ու իր դուստրը, որ ես էի իրենց աշխատանքի վերցրել, միացել էին այդ աւազակախմբին:

Ազգային առաջնորդարանն ինձ, պրն. Էլարդ Բաբախանեանին եւ պրն. Արամայիս Ներսիսեանին իբրեւ Լիզայի խնամակալներ ներկայացրեց Իրանի Յեղափոխութեան դատարանի խնամատարութեան բաժին: Բայց դա տեսեց մէկ տարի ու կէս. ես էլ, որ ոչ մի պաշտօնական հանգամանք չունէի Լիզայի եւ Էմմայի բանկային հաշուարկներում, ուստի ամէն ինչ յանձնեցի Ազգային առաջնորդարանին: Նրանք երբէք ոչ ոքի թոյլ չէին տալիս Լիզայի հետ խօսել:

հեռախօսը ոչ ոք չէր վերցնում: Մի անգամ Սրբազան Հայրը, որ ցանկանում էր Լիզային հանդիպել, մենք եւս կարողացանք նրան տեսնել: Ի վերջոյ, 2012 թուականի ապրիլին Խնամատարութեան կազմակերպութիւնն ինձ նշանակեց Լիզայի խնամակալը, իսկ Էլարդ Բաբախանեանին եւ Արամայիս Ներսիսեանին որպէս հսկիչներ:

Որեւէ էակ, երբ տկար է լինում եւ զրկուում է ինքնապաշտպանական կարողութիւնից, անապատի անգղներն ու բորենիները հասնում եւ յօշոտում են նրան ու միայն նրա ոսկորներն են թողնում:

Լիզայի պարագան էլ նոյնն էր: Ամբողջ արժէքաւոր զարդեղէնը, տարադրամները վերցրեցին ու մի նոր ցուցակ կազմեցին եւ բոլորը ստորագրեցին: Այն առաջին ցուցակն էլ, երբ իմ իրաւաբանն արծանագրողից պահանջեց, նա ասաց, թէ չգիտի որտեղ է դրել: Լիզայի բանկային հաշիւները դադարկւել էր եւ քանի որ բանկային բոլոր տեսորակներն Առաջնորդարանում էր, ես նոր ընկայ տարբեր գլխացաւանքի մէջ: Չանգատներ ստացայ մեր բնակատեղի ընդունարանի մարդկանցից, թէ ցերեկ ու գիշեր տարբեր անձանօթ մարդիկ են գալիս Լիզայի մօտ: Ես այդ տիկնոջն ու իր դստրին ազատեցի աշխատանքից: Լիզայի տունը դարձրել էին կեղտի բուն: Մի հայաստանցի կին վարձեցի, որը կարողացաւ կարգի բերել տունը: Երեւում էր, որ Լիզան կարգին չէր սնւել. նա անընդհատ վախի մէջ էր եւ ինձ ասում էր՝ ինձ մենակ մի թող: Դժբախտաբար, նա շրջապատուած էր մի խումբ մարդկանցով, որ նրանց աչքը միայն Լիզայի դրամների ու նրա հարստութեան վրայ էր: Մի օր ես այդ կնոջ ամուսնուց հարցրեցի, թէ դուք, որ ո'չ մի կապ չունէք Լիզայի հետ, ի՞նչ իրաւունքով էք նրա կեանքին միջամտում: Նա առանց ամաչելու ասաց, թէ իրեն Յիսուսն է ուղարկել: Ես էլ իրենց հաւատացած Յիսուսին հայիոյցի, որ մարդկանց պահելու համար աւազակներ է ուղարկում:

Այս տողերի նպատակն այն չէ, որ ես իմ կատարած գործերն եմ ուզում նշել, այլ սրանով ցանկանում եմ զգուշացնել այն հայերին, որ հասունացած տարիքում ճիշտ կերպով իրենց ցանկացած մարդուն խնամակալ նշանակեն: Դա իրենց ազնիւ աշխատանքի արդիւնքն է եւ ինչու պիտի մի քանի աւազակների միջոցով թալանի, այլ, թող նւիրեն հայկական դպրոցներին, միութիւններին, որ գոնէ մի քանի հայ երեխաներ կարողանան այդ դրամներով ուսում եւ հանրային դաստիարակութիւն ստանան:

Էմման եւ Լիզան երկու քոյր հայուհիներ էին, որոնք իրենց կեանքի սկզբից դժար օրեր էին ունեցել: Նրանք պատուով ու առաքինաբար ապրեցին մօտ 93 տարի եւ իրենց նեղութիւններով եւ աշխատանքներով էլ մի բաժին թողեցին մեր համայնքի ազգային հաստատութիւններին:

Հողը թեթեւ լինի եւ նրանց հոգին փառաւոր դառնայ:



Ս. ՍԱՐԳՍՅԱՆԸ՝ ԿԱՄԱՅԻՆ Ր. ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ՝ ԲԱՐՈՅԱՅՈՒԳԵՒՈՐ Յ. ԲԱԳՐԱՏՅԱՆԸ՝ ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ



Տարբել Հարությունյան

«Որպես նախագահի թեկնածուի կերպարներ ավելի վառ ու կոնկրետ արդյունքին են միտված Սերժ Սարգսյանի, Հրանտ Բազրատյանի և Րաֆֆի Հովհաննիսյանի կերպարները»,- Aravot.am-ի հետ զրույցում քննելով ՀՀ «նախագահացուների» հոգեբանական տիպարները՝ այսպիսի կարծիք հայտնեց հոգեբան Իզաբելլա Ղազարյանը:

Մեր այն հարցին, իսկ թեկնածուներից ո՞վ է ավելի մոտ հաղթանակին, տիկին Ղազարյանն այսպես պատասխանեց. «Հաղթելու շանք երեք հոգու է տրված՝ Սերժ Սարգսյան, Հրանտ Բազրատյան, Րաֆֆի Հովհաննիսյան, քանի որ նրանք հաղթանակի հասնելու հիմնական հոգեբանական որակների կրող հիմնական ներկայացուցիչներն են»:

Հետաքրքրվեցինք՝ իսկ այս ընտրապայքարում վառ անհատականություններ կա՞ն: Հոգեբանը նշեց. «Օրիգինալ կերպար է Պարույր Հայրիկյանը, զուտ իր անցած փորձով, իր կենսագրությամբ և մոտեցումներով: Բայց ընտրություններում հաղթելու և արդյունքի հասնելու համար այլ հոգեբանական որակներ են պահանջվում, բացի վառ անհատականություն լինելը: Հիմնականում շեշտը դրվում է երեք կարևոր որակների վրա՝ կամք, բարոյականություն և ինտելեկտ: Բոլոր թեկնածուները երեքն էլ, բնականաբար, ունեն, բայց օրինակ՝ Սերժ Սարգսյանի մոտ ընդգծված են կամային որակները, Հրանտ Բազրատյանն ավելի աչքի է ընկնում ինտելեկտուալ որակներով, Րաֆֆի Հով-

հաննիսյանը բարոյահոգևոր բևեռին է շեշտը դնում՝ չնայած մյուս հատկություններն էլ կան: Պարույր Հայրիկյանը ազգային, հոգևոր, գաղափարական, բարոյական բևեռին է հակված: Մնացածները համեմատաբար նոր են ու փորձում են ինչ-որ հոգեբանական ֆոն ստեղծել: Մի գիծ են վերցնում, որ լսելի դառնան, քանի որ չունեն քաղաքական բազաժ, կենսագրություն, փորձ: Դրա համար էլ մեկը բոյկոտում է, մյուսը նամակներ է գրում, փորձում են այլ օրիգինալ մոտեցումներով գրավել ու տեսանելի լինել»:

Իզ. Ղազարյանը թեկնածուների շրջանում խարիզմատիկ կերպար չի տեսնում ու նշում. «Ժամանակակից աշխարհում խարիզմատիկ կերպարներ հիմնականում չկան: Ֆիդել Կաստրոն է, մեկ-երկու կերպարներ: Իմ կարծիքով՝ ժամանակին Հայրիկյանն է եղել խարիզմատիկ կերպար, բայց խարիզման երբեմն կորելու հատկություն ունի, և Հայրիկյանը դա կորցրել է: Ժամանակակից մոտեցումների համաձայն՝ խարիզմատիկ լինելը հաճախ առաջնային չի համարվում: Ավելի առաջնային է համարվում մարդու ֆունկցիոնալությունը: Իսկ արդյունավետության տեսանկյունից զուտ որպես կերպար, մարդ ֆունկցիա, մարդ համակարգ Սերժ Սարգսյանն է: Կապ չունի՝ ինքն ինչ արդյունքների է հասել, բայց որ համակարգի մեջ է գործում և համակարգն է առաջ տանում ու ղեկավարում, դա արդեն արդյունավետություն է»:

Աղբյուր՝ www.aravot.am

ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐ

Նաիրա Հայրունեան



Վրաստանի նոր իշխանությունները, կարծես, հաստատականորեն որոշել են հրաժարվել Ռուսաստանից մեկուսացվածության ուղեգծից, որն ընդունել էր գործող նախագահ Մեխեիլ Սաակաշվիլին: Այդ քաղաքականության հետևանքով Վրաստանը հայտնվեց Ռուսաստանից կատարյալ անջրպետված վիճակում, և նրա հետ մեկտեղ Ռուսաստանի հետ երկաթուղային կապից զրկվեց նաև Հայաստանը: Եվ հենց դա դարձավ Սաակաշվիլու աքիլեյան գարշապարը, որին դա չներեցին նույնիսկ այն դեպքում, որ նա շատ բան է արել երկրի ժողովրդավարացման և ազատականացման համար:

Անցյալ տարվա հոկտեմբերի 1-ին իշխանության եկած Վրաստանի վարչապետ Բիժինա Իվանիշվիլու առաջին հայտարարությունը ռուս-վրացական երկաթգծի աբխազական հատվածը վերականգնելու առաջարկությունն էր: Առաջարկությունը հետաքրքրությամբ ընդունվեց նաև թե՛ Ռուսաստանում, թե՛ Հայաստանում և թե՛ բուն Վրաստանում: Դեմ էին Ադրբեջանը, Թուրքիան և Միխեիլ Սաակաշվիլին, որոնք նախագծել և անցկացնում են Թբիլիսի-Ախալքալաք-Կարս երկաթուղին, որը շրջանցում է և՛ Ռուսաստանը, և՛ Հայաստանը: Անցյալ տարվա վերջին Բաքու այցելելով՝ Իվանիշվիլին այնտեղ հանդիպեց աբխազական նախագծին մոլի դիմադրության, այնուամենայնիվ, հունվարի 17-ին նա Երևանում հայտարարեց, որ այս նախագծի լոբբինգի աշխատանքները շարունակվելու են, իսկ Հայաստանի վարչապետ Տիգրան

Սարգսյանը խոստացավ աջակցել նրան դրանում: Իվանիշվիլին դեռ Երևանում էր, երբ Թբիլիսիից հնչեց Սաակաշվիլու ցասկոտ արձագանքը: Նա Ռուսաստանի հետ երկաթուղային հաղորդակցության հնարավոր վերականգնման մասին Իվանիշվիլու հայտարարությունը կոչեց «հակապետական»: Նրա խոսքով՝ այսօր նման երկաթգծի անհրաժեշտությունը չկա, քանի որ Վրաստանը Ախալքալաք-Կարս երկաթգծի ճանապարհով ունի դեպի Եվրոպա այլընտրանքային ելք, և այդ երթուղին նախևառաջ Ռուսաստանի համար մրցակցային է: «Երկաթուղային հաղորդակցության վերականգնման հարցը պետք է լուծել միայն Աբխազիայի ապասկուպացիայի հարցը լուծելուց հետո կամ այդ հարցին զուգահեռ, քանի որ երկաթուղային հաղորդակցության վերականգնումը փաստորեն Ռուսաստանի կողմից Աբխազիայի ճանաչման օրինականացումն է», -նշել է Միխեիլ Սաակաշվիլին: Աբխազիան կարող է համաձայնել երկաթգծի բացման առաջարկությանը միայն այն պայմանով, եթե Վրաստանը չպնդի ժամանակին իր, սակայն անկախությունը հռչակած հանրապետություն վերադարձնելը: Ըստ ամենայնի, Իվանիշվիլու առաջարկությունը ենթադրում է հենց այդ տարբերակը՝ հաղորդակցությունների բացում առանց հակամարտության քաղաքական լուծման: Այս մեթոդն արդեն մի քանի տարի ակտիվորեն առաջարկվում է միջազգային քաղտեխնոլոգների կողմից, այդ թվում նաև՝ ղարաբաղյան և հայ-թուրքական հարցերով: Առաջարկվում է բացել հաղորդակ-

ցությունները՝ երկաթգիծը, խողովակաշարերը, էլեկտրահաղորդման գծերը՝ քաղաքական հարցերը չքննարկելով: Սակայն քանի որ դարաբաղյան հակամարտության լուծման թուրքիայի և Ադրբեջանի գլխավոր գենքը Հայաստանի շրջափակումն է, նրանք չեն կարող ընդունել առաջարկությունը, քանի որ կզրկվեն միակ փաստարկից: Նույնկերպ և Սաակաշվիլին ոչ մի կերպ չի կարող հրաժարվել մեկուսացվածության քաղաքականությունից՝ իր ժողովրդին և Հայաստանին դատապարտելով Ռուսաստանի հետ ավելի էժան երկաթուղային կապ չունենալուն: Իվանիշվիլին, հավանաբար, որոշել է փոխել այս ավանդույթը: Նա ի սկզբանե հայտարարել է, որ մտադիր է կարգավորել հարաբերությունները բոլոր հարևանների, այդ թվում՝ Ռուսաստանի հետ: Առայժմ աբխազական և հարավօսեթական խնդիրները մնում են այդ հարաբերություններում փորձության քարը, սակայն չի բացառվում, որ հենց Հայաստանը կօգնի դրանց լուծմանը: Օրերս, ինչպես մամուլում գրվեց, Երևանում տեղի ունեցան փակ վրաց-օսեթական բանակցություններ, առայժմ, հավանաբար, հանրության մակարդակով, սակայն չի բացառվում, որ Երևանը կարող է դառնալ հարավկովկասյան հաշտության համար ասպարեզ: Համենայն դեպս, Իվանիշվիլին մի քանի քայլեր կատարեց Երևանի կողմը՝ Ամենայն հայոց կաթողիկոսի հետ հանդիպման ժամանակ խոստացավ իր վերահսկողության տակ առնել Վրաստանում հայկական եկեղեցիների մասին խնամքը և թույլատրել Վրաստանի հայկական դպրոցներում մայրենի լեզվով հայոց պատմության դասավանդումը: Վրացահայ համայնքը կարող է կատարյալ վստահ լինել, որ նախընտրական շրջանում նրանց տուած խոստումները կիրականացվեն: Այս մասին հունվարի 17-ին մամուլի ասուլիսում հայտարարեց Վրաստանի վարչապետ Բիծինա Իվանիշվիլին: Իվանիշվիլու խոսքով՝ ընտրություններից առաջ նա այցելել է Վրաստանի բոլոր հայաբնակ շրջաններ, որտեղ ջերմ ընդունելության է արժանացել: «Ես ունեցել եմ մի քանի ջերմ հանդիպումներ, իմ կարծիքով՝ դա զգացել է հայությունը, արդյունքներն էլ արդեն ընտրությունների հետևանքն են: Ինչ-որ ես ասել եմ նախընտրական շրջանում, անպայման կիրականացնեն: Ես ցանկանում եմ ասել, որ մեր կառավարությունն անելու է ամեն ինչ, որպեսզի Վրաստանի հայությունն զգա, որ ապրում է իր սեփական երկրում», - ասել է նա՝ հավելելով, որ ինքը շատ հայ բարեկամներ ունի: Հունվարի 17-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն ընդունեց Երևանում այցով գտնվող Վրաստանի վարչապետ Բիծինա Իվանիշվիլուն և նրա գլխավորած պատվիրակությանը: Սարգսյանն ընդգծեց, որ Հայաստանը շահագրգիռ է Վրաստանում կայունության պահպանմամբ և ցանկանում է էլ ավելի ամրապնդել եղբայրական հարաբերու-

յունները, որոնք օգուտ կբերեն թե՛ հայ և թե՛ վրացի ժողովրդին: Վրաստանի վարչապետը հավաստիացրեց, որ իր կառավարությունն կանի ամեն հնարավորը, որպեսզի հայ-վրացական հարաբերությունները դառնան պատմության ընթացքում լավագույնը: Իվանիշվիլու խոսքով՝ Հայաստանը և Վրաստանը պետք է ստեղծեն միասնական շուկա, ինչը բարենպաստ ազդեցություն կունենա երկու երկրների տնտեսության վրա: «Վրաստանի նոր կառավարությունը մտադիր է զարգացնել հարաբերությունները հարևան երկրների հետ, մասնավորապես, տնտեսության ոլորտում»: Սարգսյան-Իվանիշվիլի հանդիպման արդյունքներով ստորագրվեցին երկու համաձայնագրեր՝ մշակույթի և ցամաքային մաքսային կետերի համատեղ օգտագործման մասին: Աբխազիայի վրայով Ռուսաստանին և Հայաստանին միացնող երկաթգծի աշխատանքի վերականգնումը հնարավոր է, և «մենք պետք է աշխատենք այս խնդրի շուտափույթ լուծման ուղղությամբ», հայտարարել է Վրաստանի վարչապետ Բիծինա Իվանիշվիլին: «Դուք գիտեք, որ մենք մեծ խնդիր ունենք Ռուսաստանի հետ հարաբերություններում: Մենք մեծ հույս ունենք և ջանքեր ենք գործադրում հնարավորինս արագ վերականգնելու Ռուսաստանի հետ հարաբերությունները: Մենք ոչ լավ հարաբերություններ ունենք նաև մեր եղբայրների՝ աբխազների հետ, սակայն երկաթգծի աշխատանքի վերականգնումը պետք է լուծվի հնարավորինս շուտ», - նշեց նա: Տիգրան Սարգսյանն իր հերթին հայտարարեց, որ Հայաստանը նույնպես ջանքեր կգործադրի այդ երկաթգծի աշխատանքի վերականգնման ուղղությամբ և ակտիվ դիրքորոշում կզբաղեցնի այս հարցի կարգավորման գործում: Հայաստանի վարչապետն իր հերթին շնորհակալություն հայտնեց վրացի գործընկերոջը դարաբաղյան հիմնախնդրի նկատմամբ հավասարակշռված դիրքորոշման համար. «Գաղտնիք չէ, որ շատ հաճախ այս կամ այն հայտարարությունները, որոնք կատարվում են Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման շուրջ, աղավաղվում են: Մենք շնորհակալ ենք մեր վրացի գործընկերներին՝ այդպիսի աղավաղումների դեպքում օպերատիվ արձագանքելու և Վրաստանի կառավարության դիրքորոշման հաստատման համար», - ասաց Տիգրան Սարգսյանը: Բիծինա Իվանիշվիլին ասել է, որ Ադրբեջան կատարած այցի ժամանակ հակամարտության մասին խոսել է նաև Իլիամ Ալիևի հետ: Սա դժվար հարց է, և մոտ ապագայում, հավանաբար, դժվար կլինի դրա լուծումը գտնել, ասել է Իվանիշվիլին: Սակայն այդ հարցը պետք է կարգավորվի խաղաղ և բանակցությունների ճանապարհով:

Աղբիւր՝ www.armenianow.com



ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԲՈՒՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԼՐԱՏԻԱՄԻՋՈՑՆԵՐԸ



ԼՐԱՏԻԱՄԻՋՈՑՆԵՐԸ՝ ԱՐՁԱԳԱՆՔ ԹՃ ՔԱՐՈՉՉՈՒԹԻՒՆ

Լրատվամիջոցների, յատկապես հեռուստատեսության, կինոյի եւ նորերս ինտերնետի կապը հասարակության մէջ տեղի ունեցող բռնի յանցագործութիւնների հետ, միշտ էլ հետաքրքրել է հասարակագէտներին: Լրատվամիջոցները յաճախ մեղադրուել են, որ արձագանքելով քաղաքացիների բռնի արարքներին, օգնում են դրա տարածմանը: Իսկ կինօն, սերիալները եւ հանրամատչելի գրքերը քննադատուել են այն բանի համար, որ ոճրագործութիւնը ներկայացնում են հմայիչ կերպով եւ կամայ թէ ակամայ երիտասարդութեանը քաջալերում են յանցագործութեան ուղղութեամբ: Լրատվամիջոցների, ֆիլմերի ու սերիալների արտադրողները, իհարկէ, իրենց պաշտպանում են ասելով, որ իրենք միայն արտացոլում են հասարակության մէջ գոյութիւն ունեցող իրականութիւնը եւ ո՛չ թէ ստեղծում այն: Վերջերս ինտերնետային կայքերը եւ սոցիալական ցանցերը եւս մեծ դեր են խաղում բռնի յանցագործական արարքների պատկերները հասարակութեան լայն խաւերի մէջ տարածելու գործում եւ այս հարցում դարձել են թիւ մէկ մեղադրեալը: Յարմար գտանք մի երկու յօդուածով անդրադառնալ այս երեւոյթին:



ՉՈՒՐԳԻՐԻ ՖԻԼՄԵՐԸ՝ ՉԻԱՐՃԱԼԻՔԻ ՄԻՋՈ՞Ց

Ռոբերթ Սաֆարեան

Բռնի կողոպուտի նոր ֆիլմեր եւ լուսանկարներ

Գողերը դամէով (մեծ դաշոյն) անցորդին սպառնալով, պահանջում են պայուսակն ու բաճկոնը յանձնի եւ երբ նա մերժում է, յանցագործների մէկը բռնի կերպով նրա գոյքը վերցնելուց յետոյ հարւածում է նրա գլխին:

Սրտաճմլիկ ֆիլմ դանակի սպառնալիքով բռնի յափշտակութեան մասին. մեղադրեալը նախ հերքում է իր մեղքը, սակայն նկարահանւած ֆիլմը տեսնելուց յետոյ խոստովանում է:

բռնի յափշտակութեան ձեռնարկած 4 յանցագործերից երկուսը մահապատժի են դատապարտւել:

Վերջերս իրանական մամուլի էջերը եւ ինտերնետային կայքերը լեւի-լեցուն են այս եւ նման լուրերով: Երիտասարդների եւ անչափահասների յանցագործութիւնը, իհարկէ, ոչ նոր խնդիր է, ոչ էլ սահմանափակուում է Իրանի հասարակութեանը, սակայն ինչու է միանգամայն այսպիսի լայն արձագանք գտնում լրատւամիջոցներում:

Անմիջական պատճառը 4 յանցագործների բռնի գողութեան ֆիլմն է, որն ինտերնետի միջոցով հանրութեան է ներկայացւել, ինչպէս նաեւ այլ դէպքերի լուսանկարները, որոնք ցայտում ձեւով ցուցադրում են այդպիսի յանցագործութիւններում գործադրող անխղճութիւնն ու վայրագութիւնը:

Յանցագործները երիտասարդներ են

Լոյս տեսած պատկերների ցնցիչ տպաւորութիւնը յաճախ այն պատճառով է, որ յանցագործները մեծամասնաբար երիտասարդներ եւ պատանիներ, նոյնիսկ երեխաներ են: Դա հասարակութեանը դնում է դժուար դրութեան արջեւ. վերջիվերջոյ, սրանք այս հասարակութեան մէջ դաստիարակւած մարդիկ են:

Դատական մարմիններն ու կարգապահ ուժերը խոստանում են, որ ամենակտրուկ ձեւով են հակազդելու նման դէպքերի, եւ ոչ մի ներողութիւն յանցագործների կողմից ընդունելի չի լինելու: Արդէն վերջին դէպքի մեղադրեալներից երկուսը դատապարտւել են մահապատժի, իսկ միւս երկուսը երկարատեւ ազատազրկման: Այսպիսի խիստ մօտեցում, հաւանաբար հարկաւոր է սովորական քաղաքացու մօտ անապոհովութեան զգացումը վերականգնելու համար, սակայն, դա դժուար թէ կարողանայ հարցը արմատապէս լուծել: Երիտասարդ յանցագործները, որպէս դրոյապատճառ յաճախ մատնանշում են իրենց ընտանիքի նիւթական կարիքները, անգործութիւնը եւ այս կարգի շարժառիթներ: Այսպիսի խօսքեր չի կարելի ամբողջովին ընդունելի համարել. ոչ ամէն անգործ երիտասարդ է գողութեան եւ ուժի գործադրութեան դիմում: Սակայն սա էլ պարզ է, որ անգործութիւնը եւ հասարակական անապահովութիւնը յարմար հող է, որի վրայ աճում է յանցագործութիւնը եւ բռնութիւնը: Խօսուում է բռնութեամբ եւ անօրինականութեամբ լի ֆիլմերի եւ սերիալների բացասական ազդեցութեան մասին, սակայն այս կարգի ֆիլմերի ազդեցութիւնն էլ այնքան պարզ չէ: Տարիների ընթացքին կատարւած հետազօտութիւնները եւ ուսումնասիրութիւնները, երբեմն հակառակն են ասացուցել. այս կարգի տեսանիւթերը, ինչպէս նաեւ վիդէօ-խաղերը,



անվնաս միջոցներ են երիտասարդի մէջ կուտակած էներգիան ու զայրոյթը դատարկելու համար, ուստի այնքան էլ պարզ չէ, որ դրանց կարելի է մեղադրել նման հակահասարակական արարքների համար:

Ձևարճանքի միջոց

Այս օրերին մի այլ առումով եւս վիդէոյի եւ բացայայտ, օրը ցերեկով փողոցներում տեղի ունեցող յանցագործութեան բնագաւառները առնչուում են միմեանց: Արդի տեխնոլոգիայի՝ փողոցներում, խանութներում, շէնքերի մուտքերում եւ ամենուր տեղադրուած տեսախցիկների (կամերաների) շնորհիւ անգամներ վիդէոյի վրայ արձանագրել է յանցագործութեան պահը: Այս տեսանիւթերի ինտերնետային տարածումով է, որ կարծես ողջ հասարակութիւնը ուղղակի դիտում է ոճրագործութեան պահը իր ողջ ցնցիչ տպաւորութեամբ: Այս տեսանիւթերը նաեւ գործ են ածուում դատարաններում որպէս փաստաթուղթ, եւ լրատւամիջոցներում որպէս զգուշացում եւ որպէս խիստ պատժամիջոցների արդարացում: Կայքերը դրանք շահագործում են աւելի մեծ քանակութեամբ այցելուներ եւ աւելի բարձր գովազդային եկամուտ ձեռք բերելու միջոց: Մի խօսքով, դրանք դառնում են զւարճանքի առարկայ: Հետաքրքիր է, թէ ինչ գրաւչութիւն կայ այդպիսի վայրագ բովանդակութիւն

պարունակող ֆիլմերում, որ այդքան հետաքրքրում է հասարակ մարդուն:

Մի խօսքով, կարելի է տեսնել, թէ լրատւամիջոցները ինչ մեծ դեր են կատարում ցանկացած դէպք հասարակութեան ուշադրութեան կենտրոնը դարձնելու գործում: Բայց նաեւ կայ այս հարցը, որ հասարակութիւնը ինչու է այսքան հետաքրքրուած գողութեան, բռնութեան, սպանութեան, կախաղան բարձրացնելու եւ նման դէպքեր դիտելով:

Այս ֆիլմերում երբեմն աչքի է ընկնում անցորդների անտարբեր կամ վախեցած ու կրաւորական վերաբերմունքը: Անցորդները յաճախ յայտնուում են կրաւորական դիտորդի դերում եւ ոչ մի բան չեն անում զոհերին օգնելու կամ յանցաւորներին դիմադրելու ուղղութեամբ: Հանգամանք, որ վկայում է հասարակութեան մէջ կարեկցանքի եւ բարոյական հասկացողութեան պակասի մասին:

Բազմակողմանի երեւոյթ

Բռնութեան աճը հասարակութեան մէջ ցաւալի երեւոյթ է, որը լուրջ ուշադրութիւն է պահանջում բոլորի կողմից: Դրա պատճառները ուսումնասիրելու եւ կանխարգելման ձեւերը գտնելու համար պիտի համագործակցեն տարբեր՝ հասարակագիտութեան, իրաւաբանութեան, մանկավարժութեան եւ լրատւամիջոցների բնագաւառների փորձագէտները:



ՈՉ ՄԻԱՅՆ ԻՐԱՆՈՒՄ

ԲՈՆԻ ԱԳՐԵՍԻԱՆ ԵՒ ՇԱՐՎԱԴԻՏԱԿԱՆ ԴՐՂԱՊԱՏՃԱՌՆԵՐՈՎ ՋԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անահիտ Ասատրյան

Այս տարի անչափահասների կողմից կատարված հանցագործությունները 32 դեպքով նվազել են՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, լրագրողների հետ հանդիպման ժա-



մանակ հայտարարեց Ոստիկանության քրեական հետախուզության երրորդ վարչության պետի տեղակալ, Անչափահասների գործերով վարչության պետ, ոստիկանության գնդապետ Նելլի Դուրյանը: Նրա



տեղեկացմամբ, նախորդ տարվա առաջին հինգ ամիսների ընթացքում արձանագրվել է մարմնական վնասվածք հասցնելու 19 դեպք, այս տարի՝ 15: Նախորդ տարի կողոպուտի 8 դեպք է եղել, այս տարի՝ 3, ավազակային հարձակման՝ 6, այս տարի՝ ոչ մի, սպանություն՝ 2, այս տարի՝ ոչ մի: Գողության 114 դեպք է եղել, այս տարի՝ 102, անցյալ տարի խարդախության մեկ դեպք է գրանցվել, այս տարի՝ էլի 1 դեպք, ապօրինի զենք կրելու 9 դեպք է եղել, այս տարի՝ մեկ: Աձել են միայն խուլիգանության եւ թմրանյութերի օգտագործման դեպքերը, եւ անցյալ տարվա 5 ամիսներում արձանագրվել է խուլիգանության 4 դեպք, այս տարի՝ 6: Թմրանյութերի օգտագործման ոչ մի դեպք անցած տարի չի եղել, այս տարի 3 դեպք է գրանցվել:

Վարչության պետը նշեց նաեւ, որ գրանցվել է անչափահասների նկատմամբ կատարված հանցագործությունների 103 դեպք:

“Ընդհանուր առմամբ, այս տարի հանցագործությունների 169 դեպք է եղել, իսկ 2010 թ. նույն ժամանակահատվածում՝ 201 դեպք”,- ընդգծեց Նելի Դուրյանը: Վարչության պետի խոսքով, կրկնահանցագործների թիվը եւս նվազել է: Իսկ նվազումը պայմանավորված է նաեւ կանխարգելման աշխատանքներով՝ արդարադատության, ոստիկանության համակարգում:

Փորձաքննությունների ազգային բյուրոյին կից քրեավարության կիրառական հիմնախնդիրների կենտրոնի հոգեբան Մարինե Պետրոսյանը, խոսելով անչափահաս երեխաների հանցագործություններ կատարելու դրդապատճառների մասին, ասաց, որ շուրջ երկու տարի է, ինչ գործում է կենտրոնը, որը 2009-2010 թվականներին անչափահասների շրջանում կատարել է տարբեր ուսումնասիրություններ՝ հանցագործությունների պատճառների հետ կապված: Հետազոտություններում ընդգրկված են եղել մարզերի եւ մայրաքաղաքի երեխաները: “Ըստ այդ հետազոտության՝ երկու տեսակի հանցագործություններն էին առավել գերակշռում՝ բռնի ագրեսիան եւ շահադիտական դրդապատճառներով կատարված հանցագործությունները”,-նշեց հոգեբանը:



Նրա ներկայացմամբ, շատ է խոսվում սոցիալական գործոններից, ծնողների գործազրկությունից, բայց նեղ անհատական առանձնահատկություններին ու գործոններին, որոնք կարող են լինել դրդապատճառ, շատ չենք անդրադառնում: “Ուսումնասիրությունների արդյունքում անչափահասների առանձնահատկություններում բացահայտվել են շատ հարաբերություններում կոնստրուկտիվ լուծումներ չգտնելու ունակություն: Այսինքն, մեկ անգամ հանցագործություն կատարած անչափահասների մոտ բավարար տեղ չի զբաղեցնում ինչ-ինչ հարաբերություններում դրական լուծումներ գտնելը, ցածր է ինքնավերահսկումը”,- նշեց հոգեբանը՝ հավելելով, որ բոլոր այն ինստիտուտները, որոնք զբաղվում են երեխաներով, այդ թվում եւ ոստիկանությունը, պետք է առաջնային ուշադրություն դարձնեն դաստիարակությանը, արժեքային համակարգի ձեւավորմանը:

Իսկ որքան “ինստիտուտներ” էլ կան, որ կամա թե ակամա խեղում են երեխաների արժեհամակարգը: Գուցե նախ պետք է դրանց դեմ պայքարել՝ առաջնորդվել Հիպոկրատի “Մի՛ վնասիր”-ով, հետո միայն առաջ շարժվել:

Աղբյուր՝ www.report.am

2013 թվականի յունւարի 1-ին իր մահկանացուն կնքեց Նոր Զուղայի անւանի բանաւեր եւ հետագօտող Լեւոն Մինասեանը: Նա հանրայայտ դէմք էր Նոր Զուղայի մշակութային կեանքում եւ տարիներ աշխատել էր որպէս ուսուցիչ, վանքի գրադարանի եւ տպարանի տնօրէն: Լ. Մինասեանը հրատարակել է տասեակ գրքեր եւ յօդւածներ, սակայն նրա ամենաաչքառու աշխատութիւնն է 1971 թվականին Լիբանանի Անթիլիասում Կիլիկիոյ կաթողիկոսութեան միջոցով հրատարակւած «Պատմութիւն Փերիոյ հայերի» աշխատութիւնը: Գիրքը ընդգրկում է Փերիա գաւառի հայ բնակչութեան պատմութիւնը 1606 թվականից մինչեւ 1956 թվականը: Գրքի նախաբանը գրել է Ներսէս Ծ. Վ. Բախտիկեանը, որն անդրադառնալով իրանահայութեան պատմութեան ուսումնասիրութեան անբաւարար վիճակին, դրական գնահատական է տուել Լ. Մինասեանի աշխատութեանը: Ստորեւ ներկայացնում ենք այդ նախաբանը ամբողջութեամբ:

ԻՐԱՆԱԳՅՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԼԵՒՈՆ ՄԻՆԱՍԵԱՆԻ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՓԵՐԻԱՅԻ ԶԱՅԵՐԻ» ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆԸ

Ներսէս Ծ. Վ. Բախտիկեան



Վերջին կէս դարու արտասահմանի մեր գրական անդաստանը ճիսացաւ երկու գօծերով: Գրի առնուեցաւ Արեւմտեան Հայաստանի երբեմն շէն եւ այժմ կիսաւեր կամ ամբողջովին կործանած քաղաքներու եւ գիւղերու պատմութիւնը իր բազմազան բովանդակութեամբ:

Անհատներ գրի առան, հրատարակեցին իրենց կեանքի ժամանակաշրջանի կարեւոր դէմքերու նկարագրութիւնները: Երկու պարագաներուն ալ մղիչ ոյժը հանդիսացաւ կորուստը, կորուստն ու քանդումը հայրենի տան ու բնագաւառին, կորսուելու վախը ապրուած կեանքի կարեւոր դրուագներում, որոնք պէտք էր գրի առնուէին ու յանձնուէին ժամանակի թելերուն՝ իբրեւ նիւթ ապագայ պատմագիրներուն:

Արեւմտեան Հայաստանի կործանումէն ետք, այս շարժումը ընդհանուր բնոյթ ստացաւ: Տեսակ մը անպաշտօն զօրակոչի ենթարկուեցան իւրաքանչիւր

քաղաքի եւ գիւղի վերապրողները, որպէսզի ֆիզիկական, նիւթական ու մանաւանդ մշակութային անհաշուելի կորուստէն ետք, գոնէ կիրկէին երբեմն շէնշող քաղաքի մը կամ գիւղի մը ժողովուրդին պատմութիւնն ու կեանքը իր այլազան երեսներով:

Այժմ, ի վիճակի ենք անվարան կերպով արծանագրելու, թէ առաւել կամ նուազ չափով, արեւմտահայը յաջողած է իր նպատակին մէջ:

Այս տեսակէտէն մեկնելով պիտի արծանագրենք, որ արտասահմանի հայութեան երկրորդ գանգուածը, պարսկահայը, դանդաղ շարժեցաւ, գրեթէ տեղքայլ ըրաւ: Անշուշտ ա՛յս ալ ունի իր պատճառները: Պարսկահայը գաղթ ու ջարդ չունեցաւ, եթէ չհաշուենք Ուրմիոյ շրջանի եւ Սալմաստի պատահարները: Իրա՛ւ է, որ պարսկահայը գաղթ ու ջարդ չունեցաւ, բայց ա՛ն ալ ունեցաւ տեղափոխութիւն:

Անցեալին մէջ գիւղի մը բնակչութիւնը, այս կամ այն պատճառով, ստիպուած է եղեր լքելու իր կառուցած տունը, վարած ու ցանած արտը, տեղափոխուել է այլ խանի մը սահմաններէն ներս ու նոր կայք հաստատել է: Գիւղեր ու գաւառներ ներգաղթի հետեւանքով պարպուեցան: Դարեր շարունակ հայութիւն ունեցող գաւառները այսօր միայն անշարժ գերեզմաններ ունին որպէս վկայ երբեմնի ապրած հայութեան բեկորներէն, լքուած եւ անտէր գերեզմաններ…

Պարսկահայոց մասին ինչ-որ գրուած է գրեթէ հինգէն կու գայ: Անկախ Թիֆլիսի եւ Պոլիսի եւ այլուր հրատարակուած թերթերու մէջ ցրուած շատ շահեկան տեղեկութիւններէն եւ յօդուածաշարքերէն, լոյս տեսած են նաեւ քանի մը մենագրութիւններ, զորս անցողակի կը

յիշենք, անցողակի, որովհետեւ մեր կեանքի ներկայ պայմանները թոյլատու չեն սպառիչ ցանկ մը կազմելու: Հաւանաբար շատ նուազ թիւով վրիպակներ ունենանք եւ նաեւ մենագրութիւններ, որոնք մեզի մնացած ըլլան: Այս հրատարակութիւններէն արժէքաւորն ու հինը կը նկատենք Յարութիւն Թ. Յովհաննէանցի Պատմութիւն Նոր Ջուղայու գործը իր երկու հատորներով: Րաֆֆիի վէպերէն մեզի հասած տեղեկութիւններէն գատ, իր ՊԱՐՍԿԱՀԱՅՔը առանձին աշխատութիւն մըն է: Ապա յիշենք Ֆրանգեանի Ատրպատականը, Աթայեանի Սալմաստը, Աւագեանի Սալմաստի ջարդը, Նազար Յ. Գորոյեանցի Պարսկաստանի հայերը, Արամ Երեմեանի Փերիա գաւառը, Չարմահալի եւ այլ աշուղներու կեանքը, Նոր Ջուղայի եկեղեցիներուն որմնանկարներուն մասին աշխատութիւն մը, Երկարակեցեան Եզնիկ Ծ. Վրդ. ի ուղեւորութիւնը, Թաղիադեանցի Պատմութիւն Պարսիցը, Հայկ Աճէմեանի գրքոյկները, Եղիգարեան քահանայի Չարմահալ գործը, Արմէն Տոնոյեանի Անդաստանը, Իրանահայ գրողները, Չարմահալի Ումս. հրատարակութիւնը, Լ. Գ. Մինասեանի Ստեփանոս Երէցը եւ Աշուղի մը գործերուն հաւաքածուն, Փերիոյ հիւանդանոցին քսանեւհինգամեակին նուիրուած հրատարակութիւնը, Էլմարի Եփրեմ Խանին նուիրուած աշխատութիւնը, Տիգրան Աբգարեանի հրատարակութիւնները, Նոր Ջուղայի բարբառին եւ թատերախումբերուն նուիրուած գրքոյկները, վերջապէս Ադանեան քահանայի Նոր Ջուղայի եկեղեցիներուն նկարագրութիւնը:

Ասոնցմէ գատ կան Պարսկահայ մամուլը, տարեգրքերն ու օրացոյցները:

Երբ նկատի առնենք Պարսկահայ գաղութը իր դարերու անցեալով, եղած հրատարակութիւնները կը գտնենք շատ աղքատ եւ տեղական բնոյթ կրող: Ատըրպատականի մասին գրողները հարաւը անտեսեր են, իսկ հարաւայինները միայն հարաւով զբաղէր են: Չենք խօսիր Թեհրանի մասին, որ տակաւին շատ երիտասարդ գաղութ մըն է: Արդ, չենք վարանիր հարց տալու, ու՞ր է Ուրմիոյ շրջանի պատմութիւնը, Խոյ գաւառէն՝ մինչեւ Չորս, մինչեւ Արտագ ու Մակու իր երբեմնի հայաշատ գիւղերով: Ու՞ր է Համադանէն մինչեւ Արաք, Բուրվարի ու մինչեւ Ազնա երկարող երբեմնի հայաբնակ գաւառներուն պատմութիւնը: Ու՞ր է պատմութիւնը Փերիա եւ Չարմահալ գաւառներուն, կէս դարէ աւելի հայկական փեթակնոցին՝

Խուզիստանի, ապա եւ Շիրազի ու վաճառաշահ քաղաքին՝ Բուշեհրի: Ու՞ր է պատմութիւնը Կասպից ծովի ափերուն թառած հայկական կամ հայաբնակ օձախներուն:

Շահ Աբաս Մեծէն սկսող հայ գաղութին ո՛չ միայն պատմութիւնը անծանօթ է հայ զանգուածին, այլ նոյնիսկ տեղանունները: Պարսկաստանի այդ խորերը, Թեհրանէն հարաւ-արեւմուտք, Թեհրանէն հարաւ, մինչեւ Բուշեհր ու Խարք, դարեր շարունակ, հայ Եկեղեցւոյ զանգերը հնչէր են: Հայ շինարար ժողովուրդը, ի գին ամէն զոհողութեան, կրցեր է իր գոյութիւնը պահել: Հայ սիրտը բաբախէր է որպէս հայ ու հայութեան սեւ ճակատագրին բաժնեկից եղեր: Երբ եւ ով պիտի տայ այդ հայ սրտին սրտոտ պատմութիւնը իր բոլոր տեսակի ելեւէջներով...

Երբ նկատի կառնենք այդ բոլորը, անվերապահ կրնանք արծանագրել, թէ Պրն. Լ. Գ. Մինասեանի Փերիոյ Հայոց Պատմութիւնը, որ լոյս կը տեսնէ Գէորգ Մելիտինեցի գրական մրցանակի ծախքով, մեծ նպաստ մը կը բերէ նշուած պակասի մէկ մասը լեցնելով:


Բանիմաց ընթերցողը, վստահօրէն, գրքին խորագիրը եւ բովանդակութիւնը ներդաշնակուած չի գտներ: Պրն. Լ. Գ. Մինասեանի նպատակը ըլլալով հանդերձ Փերիա գաւառի պատմութիւնը, ան անկէ դուրս ելած է եւ տուած է Սպահան-Նոր Ջուղայի պատմութիւնը եւ նկարագրած է այլ դէպքեր ու ներկայացուցած այլ դէմքեր, որոնք որոշ չափով կապ ունեցած են քաղաքներուն պատմութեանց հետ: Այս

անկիւնէն դիտած, Պրն. Լ. Գ. Մինասեանի աշխատութիւնը կարելի է բաժանել գլխաւոր երկու մասերու:

ա) Սպահանի, Նոր Ջուղայի եւ Փերիոյ պատմութիւնը, Շահ Աբաս մեծէն մինչեւ մեր օրերը:

բ) Սպահանի Փերիա գաւառին հայաբնակ գիւղերուն պատմութիւնը, տեղագրութիւնը, մասամբ ազգագրութիւնը, ինչպէս նաեւ անմիջական ու քիչ մը հեռուի գաւառներուն մասին, առաւել կամ նուազ չափով տեղեկութիւններ:

Չենք կրնար համարձակ կերպով արծանագրել, թէ Պրն. Լ. Գ. Մինասեանի աշխատասիրութիւնը, գիտական տուեալներու հիմունքով, պատմաբանէ մը պահանջուած բժախնդրութիւնով կատարուած գործ մըն է եւ սակայն, նկատի ունենալով իր պայմանները եւ շրջապատը, յոյժ գովելի ձեռնարկ է ընթերցող հասարակութեան հրամցնելով ծանօթութիւններու լայն



շրջագիծ մը: Եւ այս առանց պատճառի չէ:

Գրքին առաջին մասը ըլլալով հանդերձ, մեծ չափով, Սպահանի կամ Նոր Զուղայի պատմութիւնը, սերտ կապ ունի նաեւ Նոր Զուղայի ենթակայ հայաբնակ գաւառներուն պատմութեան կամ կեանքին հետ: Պրն.Լ.Գ.Մինասեան նկատի ունի իր միջավայրի դէպքերն ու դէմքերը եւ ընթերցող հասարակութեան մտայնութիւնը: Պարսկահայ մտայնութեամբ, երբ դէպքի մը մասին խօսուի, անպայման ժամանակի շահին ու խաներուն փոխարարութիւնը կը շեշտուի, անոնց մղած կռիւները երկրին այս կամ այն մասին մէջ անպայման կը յիշուին: Այս երեւոյթը զուր տեղը չէ: Ամէն մէկ կռիւ, խռովութիւն, դէպք, երկրին այս կամ այն մասին մէջ, իր անդրադարձը ունեցած է հայ կեանքին վրայ: Այս պատճառով ալ, Պրն.Լ.Գ.Մինասեան, երբ յարմար դատած է, անդրադարձած է շահերու եւ խաներու կեանքին ու գործին: Ինք, հեղինակը, ծնած, մեծացած ու սնած է այդ միջավայրին ազդեցութեան տակ եւ այդ իսկ պատճառով իր բուն նիւթէն՝ Պատմութիւն Փերիայի Հայերի, շեղումներ ունեցեր է, որոնք միջավայրին անծանօթին համար բնականաբար տարօրինակ պիտի թուէին ու թերութիւն մը պատմագրութեան հաշույն:

Պրն.Լ.Գ.Մինասեան ընդհանրապէս օգտագործած է հայ եւ պարսիկ աղբիւրներ: Եթէ իրեն համար դժուար էր բազմաթիւ այլ օտար աղբիւրներ քննել, գոնէ կարող էր աչքէ անցնել Շարտէնի բազմահատոր գործը ու Փորթըրի մեծափոր երկու հատորները, որոնք կը գտնուին Ս. Ամենափրկչեան վանքին գրադարանի մէջ: Հայերէն աղբիւրներէն, իր ուսումնասիրութեան առաջին մասին մէջ, երկար մէջբերումներ կը կատարէ Յրթ Թ.Յովհաննէանցի Պատմութիւն Նոր Զուղայու գրքէն եւ Ստեփանոս Երէցի ձեռագիր Հանգիտագիրք մատենէն: Այլ պարագաներուն, այս աղբիւրներէն այդքան երկար մէջբերումներ պիտի վնասէին ուսումնասիրողին հաշույն, բայց, նկատի ունենալով, որ Նոր Զուղայի պատմագիրքը երկար ժամանակէ ասդին սպառած գիրք մըն է եւ գրուած՝ գրաբար, ուստի ան երկու կերպով ալ մատչելի չէ հանրութեան: Այս մէջբերումներով ընթերցող հասարակութիւնը կը ծանօթանայ որոշ չափով, Նոր Զուղայի նուիրուած պատմագրքին բովանդակութեանը եւ մանաւանդ Փերիոյ միակ պատմագիր- գոնէ մինչեւ այսօր միայն մէկ պատմագիր ծանօթ է՝ Ստեփանոս Երէցի մատենանի բովանդակութեանը, որ ցարդ ձեռագիր կը մնայ:

Պրն.Լ.Գ.Մինասեանի աշխատասիրութեան առաջին մասը անկասկած որ պակաս մը կը լրացնէ մեր երեք հարիւր յիսուն տարուան պատմութեան մէկ հատուածին շուրջ: Հեղինակը լայն չափով կօգտագործէ նաեւ Դարիժեցի: Դարիժեցի գրի առած է Շահ Աբաս Մեծի օրերուն պատահածները: Նոր Զուղայի պատմագիրքը, Ստեփանոս Երէց եւ Պրն.

Լ. Գ. Մինասեան այդ գաղթին կամ գաղթերուն ենթարկուածներուն տեղաւորուիլն ու անոնց երեք հարիւր յիսուն տարուան կեանքին պատկերը կու տայ: Այս գծով, ասոնք շարունակողներն են Դարիժեցիին պատմութեան եւ զիրար լրացնողները:

Ուսումնասիրութեան երկրորդ մասը, մեր ըմբռնած ձեւով, գիւղաշխարհն է: Հայ գիւղացիի առօրեայ կեանքը, իր բոլոր տեսակի մտահոգութիւններով, Պարսկաստանի այդ խուլ անկիւններուն մէջ, միշտ ենթակայ եղած է շահերու, խաներու, կառավարիչներու ճնշումներուն: Պրն.Լ.Գ.Մինասեան շատ ցայտուն կերպով ի յայտ կը բերէ տառապանքի այդ երբեմնի գիւղաշխարհի հայուն նկարագրին տոկուն գծերը: Շնորհիւ այդ տոկուն նկարագրին է, որ աշխարհէն կտրուած այդ անկիւններուն մէջ, հայ գիւղացին, իր ճակտի քրտինքով իր առօրեան վաստակելով հանդերձ, կրցեր է պահել, հակառակ դժուարութեանց, հալածանքներու եւ կեղեքումներու, իր ինքնութիւնը, իր կրօնքը, լեզուն ու սովորութիւնները: Այդ գիւղացիները եղեր են չափէն աւելի պահպանողական: Եւ ա՛յս եղած է իրենց միակ գէնքը եւ շնորհիւ այդ գէնքին, ամբողջ երեք հարիւր յիսուն տարի կրցեր են ապրիլ իրենց հաւատքով, իրենց բնատոհմիկ սովորութիւններով, ապրելակերպով եւ այնքան անփոփոխ, որ կարծէք դեռ երէկ տեղափոխուած ըլլային Արաքսի ափերէն․․․

Ահա՛ այս կեանքն է, որ մեզ կը պատկերացնէ Պրն.Լ.Գ.Մինասեան, մեծ նպաստ մը բերելով մեր պատմութեան ու մշակոյթին: Ան շատ ծանրացած չէ ազգագրական նիւթերու վրայ, հաւանաբար, նկատի առած է, որ 1920-ին, Պրն. Արամ Երեմեան արդէն այդ նիւթին շուրջ հրատարակութիւն մը կատարած է: Պրն.Լ.Գ.Մինասեանի համար կրկնութիւն մը պիտի ըլլար, որովհետեւ Փերիացին այսօր ալ նոյնն է, ինչ որ էր 1920-ին, ինչ որ էր 1606-ին, երբ գաղթեց իր հայրենի բնագաւառէն:

Որեւէ նիւթի շուրջ սպառնիչ գործ գոյութիւն չունի: Պրն.Լ.Գ.Մինասեանի ուսումնասիրութիւնն ալ իր պակասներով ու թերութիւններով հանդերձ գնահատելի աշխատանք մըն է, մանաւանդ, երբ նկատի առնենք, որ Փերիոյ հայահոծ գաւառը հայութենէ պարպուելու վրայ է: Մենք կը մաղթենք, որ Պրն.Լ.Գ.Մինասեանի այս գործը խթան մը ըլլայ բոլոր անոնց, որոնք ապրած են Պարսկաստանի այս կամ այլ գաւառի մէջ, որպէսզի իրենք եւս փորձեն գրի առնել իրենց գաւառներուն պատմութիւնը իր բազմաթիւ երեսնեսներով: Այս ուղղութեամբ լոյս տեսած ու տեսնելիք որեւէ գործ արժանի է գնահատութեան: Մենք ջերմապէս գնահատելով Պրն.Լ.Գ.Մինասեանի քսան տարիներու տքնաջան աշխատանքը, իրեն կը մաղթենք նորանոր նուաճումներ:

... Շարունակում է նախկին համարից

Արիլը գրքերն էր նայում: Այսօր յատուկ ջինգ էր հագել, գիտէր, որ Արամը իրեն ջինգով շատ է հաւանում: Առաջին օրւանից հաւանել էր՝ այս արևելքից եկած երիտասարդին: Հիացել էր Արամի ինքնավստահ եւ միեւնոյն ժամանակ յարգանքով խառնւածքը: Մի բան, որ ֆրանսիացիների մօտ չէիր գտնի, նրանք կամ զուսպ էին, կամ յամառ: Իսկ Արամի մօտ այդ երկուսը միաձուլւել էր ճիշտ չափով:

Օրեր անընդմէջ քայլել էին Փարիզի փողոցներում, կանգ էին առել «Café flour»-ում: Խօսել ու վիճել էին: Արամը Կանտի երկրպագուներից էր ու գերմանական դասական հայեացքով էր ուզում բացատրել աշխարհը, իսկ նա խիստ ֆրանսիական էր վերլուծում շրջապատը այն էլ Դրիդայի, Ֆոկոյի ու Լականի ակնոցով: Բայց Արամը աւելի էր իրեն գրաւում, երբ սկսում էր խօսել գրականութեանից: Նա կամաց-կամաց հեռանում էր իր կոշտ ու կոպիտ գերմանական իդիալիզմից ու այլ կերպ էր բացատրում: Երէկ երեկոյեան, Արամը զանգահարել էր իրեն ու հրաւիրել որպէս առաջին անձնաւորութիւն այցելէր իր նոր բնակարանը Rue de Revoli-ում:

Արիլը այնպիսի աղջիկ չէր, որոնք առաջին հայեացքից սիրահարում են ու միասնական կեանքի մասին մտածում, նա լիքերալ էր, ազատ, առանց որևէ աւանդական մօտեցումների ու կաշկանդումների: Ապրում էր այնպէս, ինչպէս դասաւանդում էր իր դասարաններում:

Արամի գրադարանից մի գիրք հանեց, սակայն ուշադրութիւնը գրքի վրայ չէր: Մտածում էր Արամի մասին: «Էս տղէն մտաւո՞ւց ա իր թողած...»

-Սուրճ կը խմե՞ս: Մտքերը ընդհատեց Արամը: Յենւեց ձախ ոտքի կրունկի վրայ, շրջապատոյտ կատարեց:

-Oui- Merci...

Ընթրիքի սեղանին են նստել: Արամը կենտրոնում է: Դէմը Արամիկն է, կողքը Աւետ պապը: Պապանձւած նստել են ու սպասում են Նանային, որ միանայ իրենց, որ սկսեն: Երբ Նանան գալիս է տունը կարգի բերելու, սեղանը գոյնգոյն է դառնում ու տեստներով:

-Մերսի Նա՛ն, սկսենք: Պա՛պ, առաջ աղօթենք:

Արամը զարմացած նայում է Արամիկին:

- Էս էլ ի՞նչ նորութիւն է այ՛ տղայ:

Արամիկը ծայնը իջեցնում է ու շշնջալով՝ պա՛պ, ըի՛ ... մեր կրօնի ուսուցչուհին ա ասել, որ Յիսուսից...

-Իզուր է արել, աղօթելով, եթէ մի բան լինէր, հիմա

էս դժոխքում չէինք:

Արամիկը լռեց: Մինչև ընթրիքի վերջը նա մի բան չխօսեց, ինչպէս չէր խօսում Աւետ պապը: Նանան սեղանը հաւաքեց: Սեղանին մնացին երեք սերնդից մի-մի ներկայացուցիչ լուռ, անխօս...

Դպրոցը, այսօր շուտ էին արձակել: Արամիկը ժամանակից շուտ էր տուն հասել: Աւետ պապը նստած իր մշտական բազմոցին «Ալիք» էր կարդում: Ուսապարկը մի կողմ նետեց ու ներս վազեց՝ հօր սենեակը: Իր մշտական գործն էր եղել, երբ Արամը տանը չէր լինում հօր գրքերով շրջապատած սենեակն էր ներխուժում: Վերջերը մի նոր գանձ էր գտել սենեակում հօր յուշագիրքը, Կանտի գրքի կողքին դրած էր գրադարանի վերջի դարանում, կաշի էին կազմով: Վերցրեց ու սկեց կարդալ այնտեղից, ուր կիսատ էր թողել:

«15 Օգոստոս 1982: Այսօր Սորբոնից նամակ եմ ստացել, ընդունւել եմ փիլիսոփայութեան ֆակուլտետը ԱՆՀԱԿՍԱԼԻ է ... »

«22 Օգոստոս 1982 Մի շաբաթ ա ստացել եմ Սուրբոնի պատասխանը: Տարակուսանքի մէջ եմ: Գնամ, չգնամ: Արևմուտքում փիլիսոփայութիւն է սպասում, արևելքում ընտանիքս... Երանի մէկը ինձ յուշեր ճիշտը... »

Միանգամից Արամիկը վախեցաւ: Յուշամատեանը իր տեղը դրեց ու դուրս վազեց սենեակից, Աւետ պապը աթոռի վրայ չէր: - Պա՛պ, Աւետ պապ, ուր ե՞ս պա՛պ:

Չկար, Երևի դուրս էր եկել, վազեց դէպի դուռը... Բանալին դռան կողպէքում էր պտտում՝ Արամի ներկայութեան ազդանշանը...

-Պապա՛ ... Աւետ պապը, էլի դուրս ա եկել...

Արամը անհանգիստ էր: Ինչու՞ բղաւեց Արամիկի վրայ: Հիմա աղօթէին ի՞նչ կը լինէր:

- Ախ, յիմար եմ: Ինչքա՞ն եմ քեզ կարօտել, Անուշ: Ամէն ինչ շատ արագ պատահաց, ամէն ինչ: Երբ մերժեցի Սորբոնի հրաւերը, հէնց նոյն տարւայ աշնանն էր, որ հանդիպեցի քեզ: Պարզ, պարզ աղջիկ էիր, ոչ սրամիտ, ոչ էլ ինքնուրոյն, պարզ էիր ու բարի: Մի տարի անց ամուսնացանք, մի տարի յետոյ Արամիկը ու մի տարի յետոյ քաղցկեղը, մի տարի պայքար ու յետոյ գնացիր... կարօտել եմ քեզ՝ Անուշ:

Պիտի զանգահարեմ...



Արիւլը մօտենում է Արամին ու շրթների կի հետք է թողնում նրա վզին, սկսում է հոտոտել իրեն: Chanel օժանելիք է օգտուել: Արամը տաքութիւն է զգում մարմնի իւրաքանչիւր բջիջներում: Քանի տարի էր սպասել այս պահին: Իր ամենաթաքուն երազներում պատկերացրել էր Արիւլին, նրա կանացի մարմինը: Նրա մարմնի գծերը, որ սկսում էր ականջից, ծնօտի շեղ գիծը ականջի նրբութիւնը միացնում էր կիսաբաց շրթերին, յետոյ շարունակւում էր քաշւած պարանոցով, ապա այս աներկոյթ գիծը կրծքերն էին հատում ու աւարտւում երաստանով՝ ամենանուրբ անհարթութիւնը Փարիզում: Հազար-հազար անգամ երազել էր այս ամէնը ու հիմա Արիւլը իր գրկում էր:

Սիրտը ցաւաց: Տարիներ էր, որ սիրտը ցաւում էր՝ ամէն ինչ լաւ էր Սորբոնում, փիլիսոփայութեան դասերը, Փարիզը, Արիւլը, բայց սիրտը ցաւում էր...

«Պիտի զանգահարեմ...»

- Ալօ-Ալօ, Արա՞մ, դու՞ ես
- Հա, ես եմ: Դու էլ Արամն ե՞ս:
- Հա, ես էլ Արամն եմ:
- Երկար ժամանակ էր, որ սպասում էի զանգահարելուդ:
- Ես էլ...
- Ինչպե՞ս ես, ինչ կայ-չկայ, Աւետ, պապը ինչպէս ա:
- Մի տարի կայ չի խօսում: Բոլորովին չի խօսում, անգամ մի բառ:
- Չեմ հաւատում: Շատ ցաւալի ա, բայց ... բայց ինչ լաւ, որ մնացել ես նրա մօտ:
- Ինչ լաւ բան կայ, լինել-չլինելս միթէ տարբերում ա, Անուշը, Յասմիկ մամէն, հիմա էլ Աւետ պապը...
- Անուշը՞
- Հա, քեզ չէի պատմել...
- Չէ:
- Պատմելու հաւաս էլ չունեմ:
- Արա՛մ, չես հաւատայ, Արիւլը իմ բնակարանում կիսամերկ քայլում ա ու ես չեմ կարողանում, լաւ չեմ...
- Արիւլը՞:
- Հա, քեզ չեմ պատմել...

-Չէ:

-Պատմելու հաւաս էլ չունեմ:

«Արա՛մ», Նանէն կանչեց:

«Արա՛մ», Արիւլը կանչեց:

Կապը անջատւած է: Հեռախօսները սուլում են:

Սուլում են...

Արամը մերկ, Նանէն մերկ, Արամը մերկ, Արիւլը մերկ: Ցաւն են գրկել՝ Անուշի քաղցկեղն են գրկել: Արամի Սորբոնն են գրկել, ծնւած ու չծնւած Արամիկին են գրկել, Աւետ պապի մենակ թողնելն են գրկել, թափուր հայկական դպրոցն են գրկել...

Աւետ պապը փողկապը շտկեց, կօշիկների փայլը ստուգեց ու դուրս եկաւ: Ուզում էր երեխաներից առաջ, դպրոցում լինէր: Նորից աշնան սկիզբն էր ու մի նոր ուսումնական տարի: Իր ուղերձը երէկ գիշեր պատրաստել էր: Մի անգամ էլ կարդացել էր Յասմիկի համար: Ինքը գոհ էր: Պիտի երեխաներին բարի գալստեան խօսքեր ուղղէր, ողջունէր բոլորին ու ասէր, թէ դպրոցը իրենց երկրորդ տունը կը լինի: Պիտի քաջալերէր նրանց, որ աշխատեն, պիտի առաջադիմեն ու պարծանք դառնան իրենց ծնողների ու ազգի համար:

Աւետիս Աւագեանը կանգնեց ամբիոնի առջև: Վերջին անգամայ համար շտկեց փողկապը:

-Բարի լոյս:

Ամբողջ դպրոցը միաձայն բացականչեց:

– Բարի լոյս:

Տղաներն ու աղջիկները զուգւած, մաքուր ու կրկիկ տնօրէնի դիմաց կանգնած էին...

Այսօր ուսումնական տարւայ ... ծայնը բարձրա-խօսում կրկնապատկեց ու լսեց իր նախադասութիւնը՝ Այսօր ուսումնական տարւայ ...

Կանգ առաւ, որ իր յաջորդ նախադասութիւնը առաջինի հետ չխառնուի, կանգ առաւ ու խորացաւ աղջիկների ու տղաների աչքերում ...

Նրանց աչքերում կայծեր շողացին... անցողական փխրուն մի երջանկութիւն...

-Այսօր կրկին միասին ենք...

Չայնը կրկնապատկեց:

Այսօր կրկին միասին ենք...

Նորից սպասեց: Դիմացը նայեց: Դպրոցում աշակերտ չկար: Շարքերը չբացել էին: Ոչ ոք չկար:

Միայն Աւետիս Աւագեանն էր ամբիոնում կանգնած ու մի թափուր հայկական դպրոց:

Յուլիս, 2011- Սեպտեմբեր, 2012

Թեհրան



ՅԵՃԱՆԻԸ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՒՄ

Հեծանի նախասիպերը՝ քառանի ինքնագլոր սայլակները, ստեղծել են Ֆրանսիայում XVII դարում: Հետագայում դրանք գրեթե միաժամանակ ասպարեզ են եկել նաև Գերմանիայում, Անգլիայում եւ այլ երկրներում: Առաջին երկանի հեծանիները, որոնց նաև «ոսկրացունց» էին անւանում, յայտնւեցին XVIII դարի վերջերին, երբ 1791 թ-ին ֆրանսիացի կոմս դը Սիրակը կառուցեց իր սելիֆերը՝ փայտէ երկանի հեծանիւր: Այն դէկ չունէր, փայտէ անիւներն ամրացւած էին երկաթէ օղերով, շարժման մէջ էր դրոււմ ոտքերով գետնից հրելու միջոցով: Հետագայում ֆրանսիացի Միշօ եղբայրները հեծանիւն աւելացրին դէկ, առաջին անիւն ամրացրին շարժաթել ու ոտնակ եւ մեքենան անւանեցին «վելոսիպեդ» (լատիներէն «վելոքս»՝ արագ, եւ «պեդ»՝ ոտք, բառերից): Նրանք կազմակերպեցին հեծանիւների արտադրութիւն (տարեկան մինչեւ 400 հատ), որի շնորհիւ 1869 թ-ին Ֆրանսիայում սկզբնաւորւեցին հեծանաւրշաւները:

